



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«13» *ֆեբրվարի* 2020թ.

№ *21489-Ա*

Հ Ր Ա Մ Ա Ն

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ԱՐՍԵՆ ԶԱԼԻՆՅԱՆԻ, ՎԱԶԳԵՆ ՂԱՐԱԳՅՈՂՅԱՆԻ, ԷԴՈՒԱՐԴ ԱՎԵՏԻՔՅԱՆԻ, ՄՀԵՐ ՊԱՊՅԱՆԻ, ՎՈԼՈՂՅԱ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԵՎ ԱՐԵՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 6-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի թիվ 09/2020 եզրակացությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ծառայողական կարգապահությունը խախտելու՝ «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները չկատարելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արևելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժնի 1-ին բաժանմունքի պետ Արթուր Գրիգորի Գրիգորյանի, մաքսային տեսուչներ Արսեն Արարատի Զալինյանի, Վազգեն Ավետիքի Ղարազյոզյանի, Էդուարդ Սուրենի Ավետիքյանի, Միեր Լևոնի Պապյանի, 2-րդ բաժանմունքի պետ Վոլոդյա Սամվելի Ասատրյանի և մաքսային տեսուչ Արես Ալեքսանի Ալեքսանյանի նկատմամբ կիրառել «դիտողություն» կարգապահական տույժը:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Կարինե Գրիգորյանին՝ սույն հրամանը իրազեկել ողջ անձնակազմին:

Recoverable Signature

X

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ